Այժմ աշխատենք պատասխանել այն հարցին, թե արդյոք գոյություն են ունեցել հայկական ասպետական օրդեններ։ Լատինական և հայկական աղբյուրներին քաջատեղյակ Ղ. Ալիշանը ասում է, որ իրեն չի հաջողվել գտնել վկայություն հայկական ասպետական կարգի մասին։ Սակայն նա ավելացնում է, որ «Հեղինակը ոմանք ԺԵ և ԺԸ դարուց՝ ոչ գիտենք յորոց աղբերաց առեալ ասեն և կարգ հայ ասպետաց հաստատեալ ի ժամանակի հաստատութեան Տաճարականացն, այլ զի սոցայս հաստատութիւն եղեալ է յամի 1118 թիվ, Յերուսաղեմ, առ մերովս առաջին պարոն Թորոսին (1129), ոչ կարծեմ ստոյգ, բայց հավանագոյն զոր այլ ասեն՝ ի թագաւորաց մերոց հաստատեալ և ինձ սիրելի էր ասել ի Լևոն Ա (իմա Լևոն Բ) թագաւորէ՝։ Երկու դասք ասել լինել ասպետացն հայոց. մի եկեղեցականաց կամ քահանայից, և միւս աշխարայնոց, երկոցուն և նպատակ գալով բանիւ և զինու պաշտպանել զուղղափառ հաւատս և կրօնաւորիլ կանօնոք Ս. Բարսեղի, պաշտպան ունելով ՁՍ, Վլաս եպիսկոպոս. վասն որոյ և ասպետք Ս. Վլասայ կոչէին, որ և այս ոչ թվի ինձ հավանական մանավանդ զի եղեն և այլ զկարգ Ս. Վլասայ յԱսորիս. այլ ոչ ասեն հայոց սեփական»[99]։

Մեզ թվում է, որ Ղ. Ալիշանի վերոհիշյալ ենթադրությունը ճիշտ է, քանի որ 12—13-րդ դարերում ոչ մի հայ և օտար հեղինակ չեն հիշատակում հայ ասպետական կարգի մասին։ Օրինակ ֆրանսիացի ժամանակագիրներ Էռնուլը, Բեռնարդը, որոնք մանրամասն խոսում են Թորոս Ա իշխանի Երուսաղեմ ուղևորության, հայ ասպետների Կիպրոս տեղափոխվելու և այլ կարևոր անցքերի մասին, հետևաբար նրանք չէին կարող զանց առնել հայ ասպետական կարգի հիմնադրման նման կարևոր մի իրադարձություն, այլև չենք խոսում Սմբատ սպարապետի մասին, որը քաջատեղյակ էր Կիլիկիայի պատմությանը և, անշուշտ, մոտիկից ականատես Կիլիկիայի բոլոր իրադարձություններին։ Մեզ թվում է, որ Կիլիկիայում անհրաժեշտություն չէր զգացվում ասպետական կարգերի հիմնադրմանը, քանի որ ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Կիլիկիայում կազմակերպվել էին թագավորական կամ պետական բանակներ, վերջիններում ստեղծվել էին բանակի միավորումներ գունդստաբլների, մարաջախտների և այլ զինվորական աստիճանավորների հրամանատարության տակ։

Հայտնի է, որ խաչակրաց արշավանքների շրջանում 11—13-րդ դարերում ստեղծվել էին երեք հոգևոր ասպետական օրդեններ, խաչակրաց արշավանքները ոգեշնչող՝ կաթոլիկ եկեղեցին գլխավորող պապականության հովանավորության և անմիջական ղեկավարության տակ։ Դա հնարավոր դարձավ այն պատճառով, որ փաստորեն իր ձեռքն էր վերցրել արևմտաեվրոպական պետությունների քաղաքական ղեկը։ Ուստի հոգևոր ասպետական օրդենների հիմնադրումը հետապնդում էր մի հիմնական նպատակ՝ ուղեկցել և օգնել խաչակիր բանակներին՝ ազատագրելու Տիրոջ սուրբ գերեզմանը և այնուհետև մասնակցել «ազատագրված վայրերի» պաշտպանության և, մյուս կողմից, ուժեղացնել Մերձավոր Արևելքում ստեղծված ֆրանկ պետությունների ներքին և արտաքին դրությունը՝ նվաճելով նոր տերիտորիաներ, ընդլայնելով կաթոլիկ եկեղեցու և նրա հետևում կանգնած անդրծովյան գաղութատերերի առևտրա-

99 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսուան, էջ 487։